

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀԱՅ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՈԳԻԱՅԻ ՊԱՏՐՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ
СЕКТОР ИСТОРИИ АРМ. МЕДИЦИНЫ И БИОЛ. АН АРМ. ССР
Խաղաղության համար

№ 2, 1949

Տրսդի

Գ. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ք. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ի Ժ Ծ Կ Ա Խ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն Ո Ւ Մ Ո Ւ Մ Ն Ա Մ Ի Ր Ե Լ Ո Ւ
Խ Ն Դ Ի Բ Ի Ր Ն Ե Բ Ի Լ

Ներկայումս, երբ ամբողջ աշխարհը բաժանվել է երկու թշնամական լատերների՝ դեմոկրատական և հակադեմոկրատական, սրանց մեջ ծավալված իդեոլոգիական պայքարը առանձնապես սուր բնույթ է կրում ոչ միայն քաղաքականության մեջ, այլև գիտության բնագավառում: Ռեակցիոն, ֆաշիստացող անգուամերիկյան շրջանները՝ օգտագործելով պատմության զենքը, փորձուած են ապացուցել, որ նրանք մարդկային մտքի ու համաշխարհային կուլտուրայի լավագույն նվաճումների միակ՝ պահպանողներն ու շարունակողներն են: Միաժամանակ նրանք ձգտում են նվազեցնել, երբեմն էլ նույնիսկ ոչնչի հավասարեցնել մեր հայրենական գիտության գերն ու նշանակությունը համաշխարհային կուլտուրայի զարգացման գործում:

Ստեղծված պայմաններում գիտության պատմության, մասնավորապես և հատկապես բիոլոգիայի ու բժշկականության պատմության ուսումնասիրությունը մեզ մոտ առանձնապես կարևոր նշանակություն է ստանում: Այդ ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն հայրենական գիտության նվաճումները հայտաբերելու և նրա գերը համաշխարհային գիտության մեջ որոշելու տեսագծով, այլև հսկայական նշանակություն ունի սովետական երիտասարդությանը դաստիարակելու գործում:

Սովետական երիտասարդության համար բնագիտության պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունը, ինչպես հայտնի է, մատուանշել է գեռևս ընկեր Ստալինը ակադեմիկոս Կոմարովի հետ ունեցած իր զրույցի մեջ. «Այդ շափազանց կարևոր գործ է, հատկապես երիտասարդությունը պետք է իմանա-

գիտության պատմությունը», — ասում է ընկեր Ստալինը¹ Ընկեր Ստալինի այդ ցուցումը ներկայումս կենսագործվում է մեզ մոտ Մեր բոլոր ԲՈՒՀ-երում որևէ գիտություն ավանդելիս՝ ուսանողները պարտավոր են ծանոթանալ այդ գիտության պատմությանը, իսկ բժշկական ուսումնական հաստատություններում բժշկականության պատմությունը, որպես առանձին առարկա, տեղ է գտել ուսման պլանի մեջ:

Սակայն սիրալ կլինիկ կարծել, որ գիտության պատմության, մասնավորապես բժշկության պատմության դասավանդությունն ուսանողության համար ոմի սոսկ ակադեմիական ու հանրակրթական նշանակություն: Այդ դասավանդությունն ունի նաև շատ կարևոր նշանակություն սովետական երիտասարդության գաղափարական-քաղաքական դաստիարակության գործի համար: Հայրենական բժշկականության պատմության ուսումնասիրությունն ու նրան ծանոթ լինելը պետք է նրա մեջ հարգանքի գդացմունքներ զարգացնի դեպի Սովետական Միության ժողովուրդների անցյալի կովտուրան և համարտության զգացմունքով համակի իր արդի կովտուրայի համար, պետք է նրա մեջ դաստիարակի սովետական հայրենասիրության զգացմունքներ:

Վերջապես, հայրենական բժշկության պատմության ուսումնասիրությունը, որն, ի դեպ, ցարդ բավականաշափ չի կատարված, կարևոր է նաև նրա համար, որ հնարավորություն է տալիս մեզ վերականգնելու հայրենական գիտությունների առաջնությունն այն դեպքում, եթե նրանց նշանավոր հայտնագործումները ոչ արդարացի կերպով վերագրվում էին օտար գիտնականներին: Այս հանդամանքը հնարավորություն է ընձեռում մեզ զինաթափ անելու այն մարդկանց, որոնք նվազեցնում են հայրենական գիտնականների դերն ու նշանակությունը համաշխարհային գիտության մեջ: Մեր մի շարք գիտական աշխատողների մեջ նկատվող վատառողջ այդ երևությը Ա. Ա. Ժդանովը բնորոշել է որպես «ստորագրություն» Արևմուտքի առաջ. այդ երևությը որոշ շափով բացատրվում է նրանով, որ այդ գիտնականները ծանոթ չեն եղել հայրենական գիտության պատմությանն ու նվաճումներին:

Արևմուտքի կովտուրայի ու գիտության առջև կուրորեն խոնարհվելու այդ տեսնենցը մասսամբ կապված է նաև այն բանի հետ, որ մի զարք գիտնականներ՝ գտնվելով արտասահմանյան գիտնականների իդեոլոգիապես մեզ օտար և թշնամի թեո-

¹ „Правда“, № 35, 10 февр., 1945 г.

բիաների ու ուամունքների ազգեցության տակ, ինչպես այդ տեղի
ունցավ, օրինակ, բիոլոգիայի բնագավառում, չկարողացան ար-
ժանավորապես գնահատել հայրենական գիտնականների աշխա-
տությունների ու ուամունքների պրոգրամիվ բնույթը:

Այսպես, մեր գիտնականներից ոմանք հակադրեցին Վայսմա-
նի, Մենդելի ու Մորգանի սեակցիոն-ուսախստական իդեալիստա-
կան թեորիան մեր ականավոր գիտնականների՝ Կ. Ա. Տիմիրյա-
ղին, Ի. Վ. Միջուրինի և Դ. Տ. Տ. Լիսենկոյի պրոգրեսիվ մատերիա-
լիստական ուսմունքին, գիտնականներ, որոնք մշակեցին ու մի
նոր, ավելի բարձր աստիճանի հասցրին Դարվինի ուսմունքը:

Արեմուտքի կուտուրայի առջև կուրորեն խոնարհվելը հին
մուսաստանի բուրժուազիայի տենդենցիաների ու տրամադրություն-
ների գերազրուկային մնացորդներից մենքն է: Այդ բուրժուազիան
թերահավատությամբ և երբեմն արհամարհանքով էր վերաբերվում
հայրենական գիտնականներին: Այս հանգամանքն էլ որոշ շափով
կախումն ուներ այն բանից, որ նա չգիտեր հայրենական գիտու-
թյան պատմությունը: Մինչև վերջերս էլ մենք ականատես էինք,
թե ինչպես մեր գիտնականների նշանավոր հայտնագործումները
թե՛ բժշկականության և թե՛ գիտության այլ բնագավառներում հա-
փրա՞ստակում էին արտասահմանյան օտար գիտնականները: Մեր գի-
տության պատմությունը գիտե նման ոչ սակայ դեպքեր: Այսպես,
օրինակ՝ գեռևս անցյալ դարի 70-ական թվականներին ուսւ գիտ-
նականներ Գ. Ն. Մինխն ու Օ. Օ. Մոշուտկովսկին էքսպերիմեն-
տալ եղանակով ապացուցեցին, որ բժամու և վերադարձ տիֆերի
վարակակիրներն արյունածուծ միջատներն են: Վտանգի ենթարկե-
լով իրենց կյանքը, նրանք ստուգեցին այդ ենթադրությունը հենց
իրենց վրա և այդպիսով որոշեցին պարագիտար տիֆերի բնույթն
ու ծագումը: Մինչդեռ իր նշանակությամբ աշքի ընկնող այդ գյու-
տի առաջնությունը վերագրվել է ֆրանսիացի գիտնական Նիկոլին,
որը միայն քառասուն տարի անց՝ 20-րդ դարի սկզբներին, գոր-
ծադրելով այն եղանակը, ինչ որ ուսւ գիտնականները, հանգից
այն նույն հղորակացությանը: Ոչ նվազ հատկանշական է նաև մի
այլ գեղգ, կապված ուլտրավիրուսի հայտնագործման հետ:

1892 թ. Դ. Ի. Խվանովսկին մի շաբթ էքսպերիմենտներից հե-
տո՝ հաստատեց ուլտրավիրուսի առկայությունը և գրանով իսկ
սկզբնավորեց վիրուսաբանությունը: Այն ինչ արտասահմանյան
գիտությունն այդ նշանավոր գյուտը վիրագրեց Լիֆլերին, Բարեկին
և ուրիշներին, որոնք հվանովսկու գյուտից 6—10 տարի անց՝
հաստատեցին ուլտրավիրուսի գոյությունը:

Այդպիսի օրինակների թիվը ոչ միայն բժշկականության պատմությունից, այլև մյուս շատ գիտությունների (ֆիզիկա, քիմիա, տեխնիկական գիտություններ և այլն) պատմության բնագավառներից կարելի է քազմապատկել:

Որոշ գեպքերում նույնիսկ մեր գիտնականները ոչ միայն ուսու գիտնականների նշանավոր հայտնագործումները չեն ճանաչել, այլև հենց իրենց՝ այդ գիտնականներին համարում էին ոչ ուսու, այլ արևմտյան գիտնականներ։ Այդպիս է արել, օրինակ, պրոֆ. Օպակելը։ Իր մեջու վիրաբուժության պատմության» մեջ պրոֆ. Օպակելը հանձնարեղ ուսու վիրաբուժ Ն. Ի. Պիրովովին համարում է ավելի շուտ գերմանացի, քան ուսու բժիշկ, թեև Պիրովովի ուսու գիտնական լինելը չեր կարող ոչ մի գեպքում կասկածի առիթ տալ։ Նման անհիմն հայտարարությունը, սակայն, ունեցավ իր քաղաքական հետևանքները։ Հայրենական պատերազմի օրերին, երբ հիտերյան գազանաբարո զորքերը ժամանակավորապես գրավեցին Վիննիցան և նրանից ոչ հեռու գտնվող Պիրովովի նախկին դաստակերտը, գերմանական բժշկական հանդեսներից մեկի էշերում լույս տեսավ մի հոդված, որի մեջ նշված էր, որ գերմանական զորքերը գրավել են ականավոր գերմանացի գիտնական Պիրովովի դաստակերտը, ընդորում այս առիթիվ վկայակոչված է Օպակելի աշխատությունը։ Հենց այս փաստը համոզելի է դարձնում այն, թե ինչպես թշնամին, օդուագործելով մեր իսկ սխալը բժշկականության պատմության բնագավառում, դարձնում է այն քաղաքական գենք և ուղղում մեր դեմ։

Հայրենական բժշկականության հարցերի նկատմամբ մինչ սովորական զրջանի ուսու գիտնականների ցուցաբերած ոչ բավական ուշադրության հետևանքով մեր պատմա-բժշկական գրականությունը ներկայումս փավականին աղքատիկ է ու պակասավոր։ Միայն վերջերս այդ գրականությունն սկսել է հարստանալ սովորական գիտնականների աշխատություններով, որոնց մեջ նշելի են Ի. Դ. Ստրացունի, Լ. Թա. Ակորոխոսովի և Լ. Ա. Հովհաննիսյանի աշխատությունները, որոնք նվիրված են ընդհանուր ուսու և հայ բժշկականության պատմությանը, ինչպես և Խ. Ս. Կոշտոյանցի, Է. Մ. Կոնյուսի և այլոց աշխատությունները, որոնք մշակել են հայրենական բժշկականության առանձին դիսցիպլինների պատմության վերաբերող հարցերը։

Այդ գրականությունը համալրվում է այլ հեղինակների ավելի մանր (Բարսյովկովի, Բարադովինի, Մայստրախի և այլն), բայց

շատ արժեքավոր աշխատություններով, որոնց մեջ ուսումնասիր-ված են հայրենական բժշկականության պատմությանը վերաբերող մասնակի պրոբլեմները։ Բայց և այնպես ստիպված ենք արձանագրելու, որ ներկայումս էլ բիոլոգիայի ու բժշկականության պատմությունն ուսումնասիրողների թիվը շատ փոքր է։ Դրա համար, երբ վերջերս առաջ քաշվեց բժշկական ինստիտուտներում բժշկականության պատմություն ավանդելու անհրաժեշտությունը, պարզվեց, որ այդ նպատակի համար մենք շունենք նույնիսկ նվազագույն քանակությամբ կադրեր, որոնք մասնագիտացած լինեին տվյալ բնագավառում։ Այս հանդամանքը դրդեց ՍՍՀՄՌ Առողջապահության Մինիստրությանը դեռևս 1948 թ. աշնանը կազմակերպելու մասնագիտական դասընթացներ, որպեսզի այդ եղանակով որոշ շափով լրացվի գոյություն ունեցող բացը։ Եթե անգամ դասախոսական կադրերի պատրաստման հարցը դրականապես լուծվի, մի խնդիր, որ հարկավ, այնքան էլ դյուրին լուծվելու չէ, այնուամենայնիվ մեր առաջ ծառանում է մի այլ, ավելի դժվարին հարց։ Կարո՞ղ է, արդյոք, դասախոսներին և ունկնդիրներին բավարարել մեր տրամադրության տակ եղած պատմա-բժշկագիտական գրականությունը։

Բացի մի շարք ժուռնալային հոդվածներից և մի քանի մենագրություններից, որոնք նվիրված են Ռուսաստանում ծաղկած բժշկական առանձին դիսցիպլինների պատմությանը, մեր պատմա-բժշկագիտական գրականությունը սպառվում է ընդհանուր ոռու և ՍՍՀՄՌ ժողովուրդների բժշկականության պատմությանը նվիրած 5—6 ստվար օրիգինալ աշխատություններով և բժշկականության ընդհանուր պատմությունը երկու թարգմանական ձեռնարկներով։ Դա շատ քիչ է, եթե հաշվի առնենք նաև այն, որ դրանք գրված են ամբողջ 19—20-րդ դարերի ընթացքում։

Մեր աշխատանքի թուլությունն այս բնագավառում է՝ ավելի ակնբախ կերպու, եթե նկատի ունենանք նաև այն, որ մինչև օրս մենք ձեռքի տակ չունենք մի աշխատություն, որն ընդգրկեր ամրող սովորական շրջանի բժշկականության պատմությունը։

Մեծ չէ նաև ՍՍՀՄՌ ժողովուրդների բժշկականության պատմությանը նվիրված գրականությունը, թեև Միության ժողովուրդներից մի քանիսը հեռագոր անցյալում ունեցել են բավականաշատ բարձր մակարդակի վրա գտնվող բժշկագիտական կուսուրա (օրինակ՝ հայերը, Միջին Ասիայի ժողովուրդները և այլն)։ Լ. Ա. Հովհաննիսյանի՝ «Բժշկականության պատմությունը Հայաստա-

նումը լույս տեսնելուց հետո՝ կարելի է հաստատապես ասել, որ ամենից լավ ուսումնասիրված է հայ բժշկականության պատմությունը։ Մեր ձեռքի տակ եղած դրականությունը ցույց է տալիս, որ մենք իրավունք ունենք սպասելու ավելի լրիվ աշխատություններ նվիրված վրացական, աղքաբեզանական և Միջին Ասիայի սովորական ժողովորդների բժշկականության պատմության ուսումնասիրությանը։

Այդ ժողովորդների բժշկականության պատմության ուսումնասիրությունը ոչ միայն լրացնում է մեր գիտելիքները հայրենական բժշկականության պատմության բնագավառում, այլև ցույց է տալիս, թե ինչպես այդ փոքր ժողովորդները՝ անցյալում կորցնելով իրենց քաղաքական անկախությունը, մոռացության էին մատնել իրենց երթեմնի բարձր բժշկագիտական կուլտուրան, մինչդեռ այժմ՝ սովետական սիստեմի դոյության կարճ պատմական ժամանակաշրջանում՝ նրանք շտեսնված բարձր զարգացման ևն հասցրել բժշկագիտությունը։ Վերջապես, դա անհրաժեշտ է նաև նրա համար, որ ՍՍՀՄ ժողովորդների բժշկականության պատմությունը, որպես առանձին բաժին, մտնում է բժշկուկան ինստիտուտներում դասավանդվող բժշկականության պատմության ծրագրի մեջ։

Վերոհիշյալից զատ՝ մենք պետք է ընդունենք նաև այն, որ ընդհանուր և հայրենական բժշկականության պատմության գծով ցարդ գոյություն ունեցող գրականությունը որոշ դեպքերում մեզ չի բավարարում նույնպես որպակի կողմից։ Որոշ աշխատություններ հնացել են կամ չափազանց սիսեմատիկ են (օրինակ՝ Ռիխտերի աշխատությունը ոռու բժշկականության պատմության գծով կամ Գեղերի ընդհանուր բժշկականության սկանդալությունը), մյուսները լրիվ չեն, երբեմն էլ սիսալ են լուսաբանել ոռու բժշկականության առանձին էտապները կամ ականավոր ոռու դիտնական բժիշկներին։ Այսպես, օրինակ՝ Լ. Յա. Սկոլովսոնը¹ գրում է թե ոռու ժողովրդական բժշկությունն առաջ է եկել մոգական-կախարդական բժշկականությունից։ Նա կարծում է, որ ժողովրդական-բժշկական միջոցառումներին նախորդել են ժողովրդի մեջ կենցաղավարով հմայությունը, գյութումը, սիմվոլիկ գործողություններն ու զեղամիջոցները։ Այդ արմատապես սիսալ տեսակետը բացասում է

1. Л. Я. Скородов, „Краткий очерк истории русской медицины“, Ленинград, 1926 г., стр. 22.

Ճարբսիստական ուսմունքը մարդկային հասարակության կովտուրայի զարգացման մասին: Վերջապես, երրորդ կարգի աշխատությունները, չնայած դրանց մեծ առավելություններին փաստական նյութի հարստության տեսակետից, այնուամենայնիվ չեն կարող մեզ բավարարել իրենց մեթոդութիւնական դրույթներով (օրինակ՝ Կովների «Բժշկականության պատմություն»-ը):

Ծառ ավելի նվազ են բավարարում մեզ բժշկականության ընդհանուր պատմության գծով իրկու թարգմտնական (Փրանսերենից և գերմաներենից) աշխատություններ, այն է՝ Մենյե «Բժշկականության պատմություն» և այդ նույն վերնագիրը կրող Մեյերի-Շտեյնեգի ու Զուգհոֆի աշխատությունը: Սրանք, թեև հարուստ են փաստական նյութերով, բայց ունեն երկու հիմնական թերություններ, որոնք հատուկ են բժշկականության բուժության պատմաբանների մեծ մասին: Դրանք բժշկականության պատմությունը շարադրում են, հաշվի շառնելով սոցիալ-տնտեսական և քաղաքական ֆակտորները, նկատի շունենալով տվյալ դարաշրջանի համար բնորոշ այն փոփոլոգիական ուղղություններն ու աշխարհայեցողությունները, որոնք առաջ են բերել այս կամ այն հոսանքը բժշկականության մեջ:

Սովորական քննիքը ու ուսանողը զուր կորոնի այդ աշխատություններում բիոլոգիայի ու բժշկականության մեջ հնուց ի վեր առկա մատերիալիստական ու իդեալիստական ուղղությունների անընդհատ պայքարի արտացոլումը: Այդտեղ չեք գտնի վերաբերյալ հեղինակների ձգությունը, մի կողմից, մերկացնելու բժըշկականության այս կամ այն գործիք աշխարհակացողության ունակցիոն և իդեալիստական էությունը, մյուս կողմից, ցույց տալու մյուսների մատերիալիստական հայացքների պրոդրեսիվ նշանակությունը: Անդրսահմանային, հեղինակների պատմա-բժշկագիտական աշխատությունների էական արատներից մեկն է նաև այն, որ դրանց աշխատություններում համարյա քնավ չի արտացոլվել ուսուագիտական միտքը: Այսպես, օրինակ, Մեյեր-Շտեյնեգի ու Զուգհոֆի «Բժշկականության պատմության» մեջ հանճարեղ ուսուագիտական վիրաբույժ Ն. Ի. Պիրողովին հատկացված է տառացի երկուակտ երեք տող: Սրանով իսկապես սպառվում է նրանց խոսքը ուսուագիտական միտքը ոչ միայն ետ չեր մնում Արեմությունը բժշկագիտության ականավոր գործիչների մասին: Այն ինչ ուսուագիտական միտքը ոչ միայն ետ չեր մնում Արեմությունը բժշկագիտությունից, այլև հանձին նրա ականավոր ներկայացուցիչների՝ Ի. Մ. Սելենովի, Ս. Պ. Բուտկինի, Ի. Պ. Պավլո-

վի, Զախարինի, Ի. Ե. Մեշնիկովի և այլոց, որոնք դաստիարակվել էին Գերցենի, Բելինսկու, Դորոլյուսովի, Չերնիշևսկու և Պիսարևի մատերիալիստական փիլիսոփայության տրադիցիաներով, հոկայական աղեցություն են թողել Համաշխարհային բժշկագիտական և բիոլոգիական մտքի զարգացման վրա: Ինչ վերաբերում է հասարակական բժշկականության, ապա՝ անգամ օտարերկրյա դիտնականերից մի քանիսի վկայությամբ դա, ի գեմս զեմստվոյական բժշկականության, մի ամբողջ գլխով բարձր է կանգնած եղել արևմտա-եվրոպական երկրների բժշկականությունից:

Ահա այդ ամենը նկատի ունենալով՝ բժշկականության պատմության ուսումնասիրությամբ զբաղվող մեր գիտական աշխատողների առաջ ծառացած է մի մեծ և պատասխանատու խնդիր, այն է՝ համալրել այն բացը, որ առկա է ընդհանրապես Հայրենական բժշկականության պատմության և մանավանդ ու հատկապես սովորական ժամանակաշրջանի բժշկականության պատմության մեջ, և ուղղել ու վերացնել այն թերությունները և սխալները, որոնք գոյություն են ունեցել անցյալում:

Այդ խնդիրները հաջողությամբ կատարելու համար՝ նախ և առաջ անհրաժեշտ է ճիշտ մեթոդոլոգիական դիրքավորում՝ որի հիմքն անպայման պիտի կազմի Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ուսմունքը մարդկային հասարակության զարգացման օրենքների մասին: Մարքսիզմի կլասիկները տալիս են մեզ մի շարք արժեքավոր ցուցումներ ու պարզաբանություններ, որոնք օգնում են մեզ ճիշտ հասկանալու և լուծելու ոչ միայն ընդհանուր պատմական ընույթի խնդիրները, այլև կուլտուրայի ու գիտության բնագավառնից վերցրած ամեն մի հարց: Այդ ցուցումները պետք է զեկավարող հանդիսանան պատմա-բժշկագիտական ամեն մի պրոբլեմ լուծելու համար: Համեկ(թ)Պ Պատմության դասագիրքը կազմողներին ուղղած իր նամակում ընկեր Ստալինը՝ նշելով թույլ տված սխալները, տալիս է մի շարք պարզ ու կոնկրետ ցուցումներ, որոնք պետք է զեկավարող սկզբունքներ դառնան պատմական, հետևաբար և պատմա-բժշկագիտական որևէ պրոբլեմ ուսումնասիրելիս: Ընկեր Ստալինը գրում է. «Ես կարծում եմ, որ Համեկ(թ)Պ-ի պատմության մեր դասագրքերն անբավարար են երեք գլխավոր պատճառներով: Անբավարար են կամ այն պատճառով, որ նրանք շարադրում են Համեկ(թ)Պ-ի պատմությունը անկախ երկրի պատմությունից, կամ այն պատճառով, որ սահմանափակվում են պատմելով, պարզապես նկարագրելով հոսանքների պայքարի

անցուգարձենը ու փաստերը, առանց անհրաժեշտ մարքսիստական բացատրություններ տալու և կամ այն պատճառով, որ տառապում են սիսալ կառուցվածքով, զեպքերի սիսալ պերիոդիզացիայով»։ Ապա նա շարունակում է. «Հարկավոր է ոչ միայն շարադրել այն փաստերը, որոնք ցուցադրում են հոսանքների ու ֆրակցիաների առատությունը կուակցության և դասակարգի մեջ Խ.Ս.Հ.Մ.-ում, այլ մարքսիստական բացատրություն տալ այդ փաստերին»։¹

Եվ իսկապես, չի կարելի ճիշտ հասկանալ բժշկագիտության այս կամ այն ուղղության կամ հոսանքի առաջացման պատճառը, չի կարելի ճիշտ արժեքավորել բժշկագիտական այս կամ այն հայտնագործումը, եթե հաշվի առնված չեն լինի պատմական իրադրության այն առանձնահատկությունները, որոնց մեջ դրանք առաջացել են։ Դրանք չի կարելի ճիշտ արժեքավորել և հասկանալ, առանց հաշվի առնելու դրանց ծագման ժամանակն ու տեղը։ Հակառակ պարագայում պատմական երևույթների, մեր զեպքում՝ պատմա-բժշկագիտական տվյալների շարադրանքը կկրի սոսկ պարզ պատմվածքի բնույթ կամ կդառնա անպետք և անհասկանալի փաստերի անիմաստ կուտակում։ Որքան էլ դրանք ստուգ ու ճշգրիտ արձանագրված լինեն, այնուամենայնիվ դրանք գաղափար չեն տա ուսումնասիրվող գիտության զարգացման դինամիկայի մասին։ Այլ խոսքով, մենք չենք ունենա այդ գիտության վավերական և ճշմարտապատում պատմությունը։ Ուստի բիոլոգիայի ու բժշկականության պատմության ընագավառից վերցրած ամեն մի խոշոր երևույթ, որը նրանց զարգացման պատմության մեջ գարարջան է կազմել, պետք է քննության առնվի այն սոցիալ-տնտեսական պայմանների և սրանցից առաջացած փիլիսոփայական ուղղությունների, իդեոլոգիական հոսանքների, քաղաքական գաղափարների լույսի տակ, որոնք գերիշխել են տվյալ ժամանակաշրջանում։ Այստեղից էլ անհրաժեշտություն է առաջանալ պատմա-բժշկագիտական հետազոտությունները կատարելիս՝ սահմանել ճիշտ պերիոդիզացիա։ Այդպիսի պերիոդիզացիա, որի հիմքում դրված է մարքս-լենինյան ուսմունքը, մարդկային հասարակության զարգացման օրենքների մասին, տվել է ընկեր Ստալինը «Համեկ(ր)Պ պատմության համառոտ դասընթացքի» մեջ։

Պերիոդիզացիայի համար հիմք ընդունելով հինգ հիմնական

¹ Ընկեր Ստալինի նամակը Համեկ(ր)Պ պատմության դասագիրք կադ-մուկներին, «Պատմական գիտության Փրոնտում», Երևան, 1938 թ., էջ 15—16։

Հասարակական ֆորմացիաները նրանց բնորոշ իդեոլոգիական հուսանքներով և փիլիսոփայական ուղղություններով հանդերձ՝ մենք պետք է նշենք, որ յուրաքանչյուր ֆորմացիայի սահմաններում կատարվող խոշոր սոցիալ-տնտեսական տեղաշարժերն իրենց հերթին առաջ էին բերում նոր գաղափարական հոսանքներ, որոնք համապատասխան ձևով ազդում էին բժշկագիտական և բիոլոգիական մտքի բնույթի և ուղղության վրա։ Այսպես, օրինակ, վաղ շրջանի ֆեոդալական հասարակության մեջ, երբ գարգանում է, սրա համար տիպական տնտեսական կառուցքը, գերիշխում է ամենախոշոր ֆեոդալի՝ քրիստոնեական եկեղեցու գաղափարախոսությունը։ Այս շրջանի բժշկագիտությունը գտնվում է կրոնական դոգմատիկայի բացարձակ ազդեցության ներքու նույն ֆեոդալական հասարակության մեջ ավելի ուշ շրջանում, երբ զորեղանում են առևտուրը, արդյունաբերությունն ու փողային տնտեսությունը, առաջ է գալիս մի նոր դասակարգ—բուրժուազիան։ Զգտելով յուրացնել բնույթյան հարստությունները՝ այս դասակարգը զարկ է տալիս նաև բնագիտության զարգացմանը։ Փորձն ու դիտողությունը դառնում են գիտական հետազոտության հիմքը։ Այս շրջանի բժշկագիտությունը զարգանում է Դեկարտի և Բեկոնի փիլիսոփայական գաղափարների ազդեցության տակ։

Այսպիսով, ճիշտ պերիոդիզացիան հնարավորություն է տալիս հավաստելու տիրող դասակարգի գաղափարախոսության ազդեցությունը բժշկագիտական մտքի բնույթի և ուղղության, ինչպես նաև յուրաքանչյուր հասարակական ֆորմացիայում, յուրաքանչյուր հասարակարգում իշխող առողջապահական կազմակերպության սիստեմի վրա։ Նա հնարավորություն է ընձեռում մեղ ի հայտ բերելու բժշկագիտության դասակարգային բնույթին իր պատմական զարգացման բոլոր էտապներում։ Վերջապես, ուսումնասիրության այս մեթոդը հնարավոր է դարձնում ցույց տալու, որ բժշկական գիտելիքների զարգացումը, որ սերտորեն կապված է մարդկային հասարակության զարգացման հետ, տեղի է ունեցել ոչ թի աստիճանաբար, ինչպես այդ ներկայացնում են բժշկագիտության բուրժուական պատմաբանները, այլ թոփշաձև։

Այնուհետև, հետազոտության մարքս-լենինյան մեթոդը, որ միակ գիտական մեթոդն է, պահանջում է պատմական երևույթները կամ առանձին անհատների գործունեությունը բննույթյան առնել այն պատմական միջավայրում, որի մեջ զարգացել և ընթացել են այդ երևույթները կամ առանձին անհատների գործունեությունը, և ոչ

թե այսօրվա լուսի տակ, ինչպես այդ անում են Պոկրովսկու ողպրոցի պատմաբանները: Սրանց սխալ մոտեցման հետևանքով աղջատվում են պատմական դեմքերի ու դեպքերի ճիշտ նկարագրությունները, բացազում է դրանց ճիշտ արժեքավորելու հնարավորությունը: Հենց այդ պատմառով էլ իր ժամանակի համար առաջակրու ու պրոգրեսիվ գաղափարներն ու դեմքերը դուրս են գալիս ընդգծված հետադիմական (ռեակցիոն):

Այդպիսի սխալ մոտեցման օրինակ կարող է ծառայել այն գնահատականը, որ տալիս է ի. Դ. Ստրաշոնը¹ ուսւ թժկագիտության մի քանի ականավոր գործիչներին, մասնավորապես Պիրովովին: Հաշվի շառնելով այն պատմական միջավայրն ու պարագաները, որոնց մեջ ապրել ու գործել է Պիրովովը, ի. Դ. Ստրաշոնն առանձնապես ընդգծել է Շ. Ի. Պիրովովի գործունեության այն սխալներն ու մոլորությունները, որոնք նրա դարաշրջանի ծնունդն էին: Նման մոտեցման հետևանքով՝ Պիրովովը ներկայացվել է իրեւ մի ռեակցիոն դեմք, իսկ նրա նորարարությունը և աշքը ընկնող դերը ոչ միայն ոռու, այլև համաշխարհային գիտության մեջ, նվաստացել ու նսիմացել է: Այսպիսի մոտեցման սխալ լինելը ներկայումս ընդունում է նաև ինքը՝ ի. Դ. Ստրաշոնը:

Վերջացնելով մեր հաղպածը, մենք կցանկանալինք համառոտակի անդրադանալ այն հարցերին, որոնք ծառացած են Անդրոկովկասի ժողովուրդների թժկականության պատմության ուսումնասիրության առաջ, մի պատմություն, որը կազմում է հայրենական թժկագիտության պատմության ամենահնադույն հատվածը: Միջնադարյան հայկական թժկագիտական բաղմահատոր աղբյուրների ուսումնասիրության նշանակությունը, կոնկրետ նշված է ՍՍՌԴՄ Գիտությունների Ակադեմիայի գիտա-կոորդինացիոն խորհրդի կողմից, որը՝ քննության առնելով Հայկական ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի Հայ թժկականության ու Բիոլոգիայի Պատմության սեկտորի 1948թ. գիտա-հետազոտական պլանը, իր ներակացության մեջ ընդունում է, «Հայկական թժկականության ու բիոլոգիայի ուսումնասիրությունը շատ կարևոր է ոչ միայն հայ ժողովրդի, այլև մեր երկրի գիտության ընդհանուր պատմության համար, քանի որ հայ կուտարան ու գիտությունը Սովետական Միության ժողովուրդների մեջ հնագույններից մեկն է հանդիսանում: Նրա վրա արտացոլվել է հին և արևելյան գիտության պատմությունը»...

1 Б. М. Э. „Медицина“, И. Д. Страшун.

Անդրկովկասի ժողովուրդների բժշկագիտությունն ուսումնասիրելիս կարևոր է հավաստել այդ ժողովուրդների բժշկագիտության մեջ եղած ընդհանուր գծերը, ժողովուրդներ, որոնք տասնյակ դարերի ընթացքում ապրել են կողք կողքի, ոնեցնել բազմաթիվ ընդհանուր տնտեսական և քաղաքական շահեր, ինչպես նաև միատեսակ երկրամասային պաթոլոգիա:

Ոչ նվազ կարևոր խնդիր է նաև ուսումնասիրել այն ուղիները, որոնք հնուց ի վեր կապում էին Անդրկովկասի ժողովուրդների, մասնավորապես հայերի, բժշկագիտությունը ուսա բժշկագիտության հետ, և առանձնապես ուսա մատերիալիստական փիլիսոփայության և առաջավոր բժշկագիտության ազդեցությունը Անդրկովկասի բժիշկների և բիոլոգների վրա: Մրանք այստեղ հող են պատրաստել սովետական բժշկագիտության սկզբունքները հաջողությամբ յուրացնելու համար: Այս վերջինների ուսումնասիրությունը ամենից ակտուալը և կարևորն է, որ ծառացած է մեր ամբողջ երկրի բժշկագիտության պատմարանների առաջ: Դա նաև կարևոր քաղաքական խնդիր է, որովհետև նա պիտի ցույց տա սոցիալիստական հասարակության առողջապահական սիստեմի անհամեմատելի գերազանցությունը կապիտալիստական սիստեմի հանդեպ և մատերիալիստական աշխարհայեցության հաղթանակն իդեալիստական աշխարհայացքի վրա, նաև բիոլոգիայի ու բժշկագիտության բնագավառում:

Г. Г. АРУТИОНЯН

О ЗАДАЧАХ ИЗУЧЕНИЯ ИСТОРИИ МЕДИЦИНЫ

В настоящее время, когда мир разделился на два враждебных лагеря, лагерь демократических и антидемократических сил, не только политическая, но и идеологическая борьба между ними приобретает особенно острый характер.

Реакционные англо-американские круги, используя данные истории, стремятся доказать, что они являются единственными хранителями и продолжателями лучших достижений человеческой мысли и мировой культуры; одновременно они пытаются умалить и даже свести на нет роль и значение нашей науки в деле развития общечеловеческой культуры.

В этих условиях изучение истории отечественной науки, в частности истории биологии и медицины, приобретает особенно важное значение. Оно важно не только с точки зрения выявления достижений отечественной науки, но и той роли, которую оно должно сыграть в деле идеально-политического воспитания советской молодежи. Изучение относящихся сюда вопросов поможет восстановить приоритет отечественных ученых во многих выдающихся открытиях, несправедливо присвоенных зарубежными учеными, выявляя, таким образом, передовую и в настоящее время ведущую роль нашей науки в развитии мировой науки. Изучение истории медицины как досоветского, так и в особенности советского периода, должно способствовать ликвидации нездорового явления, имеющего место среди ряда наших ученых, которое А. А. Жданов характеризовал термином «низкопоклонство» перед Западом. Это нездоровое явление объясняется отчасти тем, что часть наших научных работников находилась во власти враждебных нам идеалистических теорий и учений; в известной же степени сказанное вытекало из незнания истории отечественной науки.

Мы должны безоговорочно признать, что вопросом изучения истории отечественной биологии и медицины как в прошлом, так и в настоящем, у нас сравнительно мало занимались. Опубликованный за последнее время ряд работ советских авторов как по истории всеобщей, так и отечественной медицины (труды И. К. Страшунова, Л. Я. Скороходова, Л. А. Оганесяна, Х. С. Коштоянца, Э. М. Конюс и др.) показывает, что этому весьма важному вопросу у нас начали уделять должное внимание только в последнее время. Все же число работ и исследований по истории отечественной медицины, и в особенности истории медицины советского периода, явно недостаточно, и наша историко-медицинская литература пока весьма небогата.

Этот пробел в историко-медицинской литературе оказывается еще более значительным, если учесть, что у нас по сей день не имеется работы, охватывающей в себе всю историю медицины советского периода. Наконец, некоторые из имеющихся работ в настоящее время не могут нас удовлетворить и в качественном отношении. Одни из них устарели (работы Рихтера и Гезера), в других вопросы русской медицины и харак-

теристика медицинских деятелей освещены неполно и подчас неправильно (работы Оппеля и Л. Я. Скороходова), третьи, хотя и содержат богатый фактический материал, не удовлетворяют нас своими методологическими установками (работа Ковнера). Тем более нас не могут удовлетворить имеющиеся в сокращенном русском переводе две работы по истории всеобщей медицины (Менье и Мейер-Штейнега и Зудгоффа), уделяющие русской медицине и ее выдающимся деятелям самое незначительное место. Такое неудовлетворительное положение в области изучения истории отечественной медицины ставит перед нашими научными работниками весьма ответственную и актуальную задачу—пополнить зияющие пробелы в нашей историко-медицинской литературе.

Основным условием при выполнении этой ответственной задачи является правильная методологическая установка, основанная на единственно научном марксистско-ленинском учении о законах развития человеческого общества. Классики марксизма дают ряд ценных указаний, которые являются руководящими не только при изучении общеисторических, но и историко-медицинских проблем. Таким является, например, указание товарища Сталина в письме к составителям учебника по истории ВКП(б). (Сборник «К изучению истории ВКП(б). Госполитиздат, 1938 г.»:

В свете указаний товарища Сталина историк вообще, в частности историк медицины, изучая любую историко-медицинскую проблему, должен увязать ее с историей страны, должен рассматривать ее в той исторической обстановке, в которой она зародилась и развивалась. Он должен заниматься не просто изложением фактов из области истории медицины, а давать этим фактам марксистское толкование. Наконец, в основу научного исследования должна лечь правильная периодизация, которая дана нам товарищем Сталиным в «Кратком курсе истории ВКП(б).

Такой подход обязывает нас рассматривать отдельные этапы в развитии медицины в связи с социально-экономической структурой общества, в связи с идеологическими направлениями и течениями, доминирующими в данном обществе. Все это даст нам возможность выявить классовую сущность

медицины во все этапы ее развития и отметить ту непрерывную борьбу, которая в течение тысячелетий велась между идеалистическими и материалистическими течениями в медицине и биологии.

Особо следует подчеркнуть необходимость изучения истории медицины народов, входящих в состав Советского Союза, и в частности народов Средней Азии и Закавказья. Последние, наиболее древние народы, входящие в состав Советского Союза, имели в историческом прошлом высокую медицинскую культуру. История медицины этих народов представляет собою наиболее древний раздел истории отечественной медицины.

После выхода в свет «Истории медицины в Армении» Л. А. Оганесяна можно считать, что наиболее изученной является армянская медицина. Подробное изучение истории медицины всех народов Закавказья даст нам возможность выявить общие черты в медицинских знаниях этих народов, в течение тысячелетий связанных друг с другом экономическими, политическими и культурными узами. Своевременной и весьма важной задачей является также изучение тех нитей, которые издавна связывали русскую медицину с медициной народов Закавказья. Необходимо всесторонне изучить влияние русской материалистической философии и передовой русской медицины на врачей и биологов Закавказья, подготовивших здесь почву для успешного внедрения и освоения принципов советской медицины.

